ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1843-Ա « 20 » մայիսի 2024թ.

«ԿԱՌԼԵՆ ԵՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ», ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ԵՐԵՎԱՆԻ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ «ՆՈՐ ՆՈՐՔ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 27-ի N 518-Ա որոշման հ.2 հավելվածի 8-րդ կետով (Երևանի քաղաքապետի 2021 թվականի փետրվարի 1-ի հ. 2 հավելվածի խմբագրությամբ)

1. Հաստատել «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա», Երևանի «Կարմիր Բլուր» առողջության կենտրոն, Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» առողջության կենտրոն և Երևանի «Նոր Նորք» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2024թ. մայիսի 21-ին ժամը 11.00-ին նախատեսված մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը (կցվում է).

2.Հանձնաժողովի նախագահ նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանին:

3.Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետի կողմից հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Մ.Պետրոսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ